պապերի քաղցր յիշատակը և 1900 տարուայ բարի ճանապարհը, և մուրացկանի նման ուրիշ ազգերից հոգւոյ ողորմութիւն էք խնդրում, ամօթ ձեզ, ձեր պապերը այնքան դառն ու դժուար միջոցներում, հեթանոս, բարբարոս ազգերի մէջ ապրելով՝ երբէք չմտածեցին անգամ եկեղեցին ուրանալ, այլ իրենց կարմիր արիւնով, նահատակութեամբ պահեցին եկեղեցին և հասցրին իրրեւ սուրբ աւանդ մեզ, իսկ դուք ապերախտ որդիք, այս ազատ միջոցում, քրիստոնէութեան ամենափառաւոր ժամանակամիջոցում, քրիստոնեայ տէրութեան ձեռքի տակ, ուրացաք ու մոռացաք եկեղեցին, և այս է, որ ըստ Աւետարանին «Քարինքն եւս են աղաղակում» բողոքում ձեզանից, ինչպէս Մէյսարու սուրբ Աստուածածնի վանքը ահա բողոքում է ձեզանից, մանաւանդ որ՝ արձանագրերը նզովում են ասելով «ով որ խափանէ Տաճարիս ժամ, Պատարագն, նզովեալ եղիցի»։

Ահա Մէյսարի վանքի բողոքն ց1890 թվ. և է յաւելուած և շարունակութիւն Տէր Խորէնի բերնով բողոքին։

1 Արդ՝ Հայ պատանի՝ դու Զամախեցի,
Այս իմ հարցմունքիս՝ տուր պատասխանի,
Ինչու թողիք ինձ՝ այսպէս խեղճ այրի,
Ինչու հեռացաք ինչպէս օտարի,
Սառնասիրտ Հայի։

2 Ո՞ւր են հարազատ իմ հոգեւորդիք,
Որք վայելում էին հոգեւոր բարիք,
Հաւատ, յոյս ու սէր՝ իրրեւ զէնք հագած,
Փայլում էին միշտ՝ յաղթանակ տարած,
Փառք պսակուած։

3 Ո՞ւր են փառաւոր նոցա յիշատակ,
Է՞ր դուք մոռացաք նոցա սուրբ կտակ,
Նոցա աւանդած՝ մեծ փառքն ու պսակ,
Եւ այսպէս թողիք՝ ինձ մէն միայնակ,
Օտարին ծանակ